

Ռեզիդնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի
պատմությունն ու գործունեությունը

Մինչև 2013 թ.-ը ֆակուլտետում գործել են երկրաբանական գիտությունների երեք մասնագիտացված ամբիոններ՝ «Միներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի», «Պատմական և ռեզիդնալ երկրաբանության» և «Օգտակար հանածոների որոնման և հետախուզման»:

2013.թ-ին ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումով վերամիավորվեցին առաջին երկու ամբիոններն ու ստեղծվեց «Ռեզիդնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի» ամբիոնը, որը՝ սակայն, գործեց ընդամենը հինգ տարի: Այդ ընթացքում ամբիոնը ղեկավարում էր դոց. Շ.Խաչատրյանը:

2019թ.-ին այն վերամիավորվեց Օգտակար հանածոների որոնման և հետախուզման ամբիոնի հետ և հիմնադրվեց «Ռեզիդնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման» ամբիոնը: Ամբիոնի վարիչ ընտրվեց երկրաբ.գիտ. թեկն. դոց. Շահեն Խաչատրյանը:

Նորաստեղծ ամբիոնի պատմությունն անշուշտ չի սկսվում 2019թ.-ից այլ իր մեջ կրում է բոլոր այն երեք ամբիոնների պատմությունը, որոց միավորումից այն ձևավորվեց:

Պատմական և ռեզիդնալ երկրաբանության ամբիոնը կազմավորվել է 1949 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ն. Գաբրիելյանի նախաձեռնությամբ: Սկզբում այն կոչվել է «հնէաբանության և պատմական երկրաբանության» ամբիոն, 1980 թ. - ից այն կոչվում է Ռեզիդնալ և պատմական երկրաբանության ամբիոն:

Ամբիոնը ղեկավարել են պրոֆեսորներ Ա. Ն. Գաբրիելյանը (1949 - 1981), Ն. Ն. Սարգսյանը (1981 - 1997), Գ. Պ. Սիմոնյանը (1997 - 2005), Է. Խ. Խարազյանը (2005-2012), Ա.Գրիգորյանը (2012-2013):

Ամբիոնում դասավանդել են պրոֆեսոր, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան Ն. Ն. Սարգսյանը, դոցենտներ՝ Ա. Վ. Վարդանյանը, Հովհ.Հ.Սարգսյանը, երկրաբ.հանք. գիտ. դոկտոր Կ.Ս.Մուրադյանը, Ֆ.Հայրապետյանը, դասախոս Ս. Վ. Ոսկանյանը: Տարբեր տարիներին ամբիոնում աշխատել են ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյանը, դոցենտներ Հ. Ս. Նազարյանը, Հ. Գյուլեցյանը:

Պատմական և ռեզիդնալ երկրաբանության ամբիոնը լուրջ ավանդ է ունեցել Հայաստանում երկրաբանական գիտության զարգացման և մայրենի լեզվով երկրաբանական տերմինաստեղծման բնագավառներում: Այն երկար տարիներ համարվել է Հայաստանի

ռեզիռնալ երկրաբանության ուսումնասիրման առաջատար գիտական ստորաբաժանումը հանրապետությունում:

Ամբիոնի գիտահետազոտական ուսումնասիրությունների հիմնական ուղղություններն են եղել ՀՀ և հարակից տարածքների տեկտոնիկան, սեյսմատեկտոնիկան, Հայաստանի տարածքի շերտագրությունը, նորագույն հրաբխականությունը, երկրաբանական զարգացման պատմությունը և երկրաբանական քարտեզագրումը:

Ամբիոնի աշխատակիցները հրատարակել են ավելի քան 500 գիտական հոդվածներ, 30 մենագրություններ, 3 բառարաններ, 5 ուսումնական ձեռնարկներ: Առավել կարևոր մենագրություններն են Ա. Ա. Габриелян «Третичные отложения Котайкского района Арм ССР» (Եր. 1947), Ա. Ա. Габриелян «Основные вопросы тектоники Армении» (Եր. 1959), Ա. Ա. Габриелян «Палеоген и неоген Арм ССР» (Եր. 1964), Ա. Ա. Габриелян, Օ. Ա. Саркисян, Գ. Ս. Симонян «Тектоническая карта Арм ССР» (Եր. 1968), Օ. Ա. Саркисян, Գ. Ս. Симонян «Сейсмоструктура Армянской ССР» (Եր. 1981), Ա. Ա. Габриелян, Օ. Ա. Саркисян «Геология Армянской ССР» Ե (տ. 1, 2, 5, 7, 1960-1974) Ա. Ա. Габриелян, Օ. Ա. Саркисян «Стратиграфический словарь СССР» (Մ. 1982), Օ. Ա. Саркисян «Палеоген Севано-Ширакского синклинория» (Եր. 1966), Հ. Հ. Սարգսյան «Երկրաբանական տերմինների ռուս-հայերեն բառարան» (Եր. 1984), Հ. Հ. Սարգսյան «Հայաստանի ռեզիռնալ երկրատեկտոնիկա» (1989):

«Միներալոգիայի և պետրոգրաֆիայի» ամբիոնը, որը հետագայում վերանվանվել է «Միներալոգիայի, պոտրոլոգիայի և երկրաքիմիայի» ամբիոն հիմնադրվել է 1950 թ-ին: 1950 - 1963 թթ. ամբիոնը ղեկավարել է դոց. Թ.Շ.Թադևոսյանը, 1963 - 1995թթ-ին՝ պրոֆ.Ս.Ի.Բալասանյանը, 1995 - 2009 թթ. պրոֆ.Ռ.Գ.Գևորգյանը, 2009 2013թթ. դոց.Շ.Վ.Խաչատրյանը:

Հիմնադրման օրից ամբիոնում կատարվել են զգալի գիտահետազոտական աշխատանքներ նվիրված Հայաստանի տարածքի հրային ապարների և նրանց հետ կապված օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրմանը:

Ամբիոնում դասավանդել են մի շարք հեղինակավոր գիտնականներ՝ ակադ. Հ.Գ.Մադաթյանը, Ռ.Տ.Ջրբաշյանը, Ս.Ս.Մկրտչյանը, դոկտոր-պրոֆ. Ս.Ի.Բալասանյանը, Հ.Հ.Գրիգորյանը, դոց.Թ.Շ.Թադևոսյանը, Հ.Պ.Գույումջյանը, **Ա.Ս.Շատվորյանը**, Ս.Ա.Իսահակյանը, Հ.Ադամյանը, Ս.Ալիքոյանը, Վ.Ա.Աղամալյանը, Շ.Հ.Ամիրյանը, Ռ.Ա.Մանդալյանը, Ղ.Լ.Գալոյանը, Ս.Ա.Առաքելյանը, Ս.Ռ.Գևորգյանը և այլոք: Ամբիոնում հրատարակվել են տասնյակ մենագրություններ և գիտական հոդվածներ:

Օգտակար հանածոների հանքավայրերի (ՕՀՀ) որոնման և հետախուզման ամբիոնը

կազմավորվել է 1952 թ.: Դա ժամանակի հրամայականն էր: Հիսունական թվականների սկզբում մեծ թափ առան երկրաբանահետախուզական աշխատանքները, նպատակ ունենալով ստեղծելու և հանքային հումքով ապահովելու բուռն զարգացում ապրող Հանրապետության ավանդական և նոր կազմավորվող արդյունաբերության ճյուղերը՝ գունավոր մետաղագործությունը, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերությունները:

Ամբիոնի առաջին վարիչը եղել և երկար տարիներ այն ղեկավարել է (1952 – 1978 թթ.) երկր.-հանք. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, հանրապետության գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ Բ.Ս. Վարդապետյանը: Այնուհետև, 1978 – 1994 թթ., ամբիոնը ղեկավարել է երկր.-հանք. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Բ.Հ. Բեգիրզանովը: 1994-2018թթ. ամբիոնը ղեկավարել է երկր.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ.Ս. Մովսեսյանը:

Ամբիոնում դասավանդել են՝ Ռ.Հարությունյանը, Հ.Հ.Մկրտչյանը, Ա.Ս.Ավանեսյանը, Հ.Հ.Աղամյանը, Գ.Գարեյանը, Ս.Ներսեսյանը, Հ.Մովսեսյանը:

Ամբիոնի գործունեության ընթացքում աշխատակիցները լույս են ընծայել բազմաթիվ մենագրություններ, դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, մեթոդական ցուցումներ, գիտական հոդվածներ, գիտատեխնիկական հաշվետվություններ: Նշենք նրանցից մի քանիսը. “Закономерности распределения медного оруденения на территории Арм.ССР” (Вартапетян Б.С., 1965), “Օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզում” (Վարդապետյան Բ.Ս., 1987), “Տեխնածին հանքահումքային ռեսուրսներ” (Մովսեսյան Ռ.Ս., մեթոդական ձեռնարկ, 2006), “Հանքավայրերի երկրաբանատեսական գնահատումը որոնման փուլում” (Մկրտչյան Հ.Հ., մեթոդական ձեռնարկ, 2006), “Բնապահպանական հարցերն ընդերքօգտագործման ոլորտում” (Ներսեսյան Ս.Ս., մեթոդական ձեռնարկ, 2013), “Կառուցվածքային երկրաբանություն և երկրաբանական քարտեզագրություն դասընթացի կուրսային աշխատանքների մեթոդական ցուցումներ” (Ավանեսյան Ա.Ս., Մովսիսյան Հ.Բ., 2014) և այլն: Ամբիոնի աշխատակիցների վերջին տարիների հրատարակությունների ամբողջական ցանկին կարելի է ծանոթանալ ԵՊՀ կայքում տեղադրված նրանց անձնական էջերից:

Այսօր Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնը շարունակում է պահպանել երկրաբանական գիտության կարևորագույն հիմնարար ուղղությունները ինչպիսիք են պետրոգրաֆիան, մետաղածնությունը, երկրատեկտոնիկան, օգտակար հանածոների որոնում և հետախուզումը, երկրաքիմիա, ռեգիոնալ

երկրաբանությունն ու հնէաբանությունը: ՀՀ-ում միակ երկրաբանական գիտությունների ուղղությամբ մասնագետներ պատրաստող ամբիոնն է:

Հանրապետությունում իրականացվող հանքարդյունաբերական և երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալների աճն արդիական է պահում համապատասխան որակավորման՝ “Երկրաբանական հանույթ, օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզում” մասնագիտացմամբ երկրաբան երիտասարդ կադրերի պատրաստումը և Ամբիոնն այսօր պատրաստում է երկրաբանության բակալավրեր և մագիստրոսներ՝ “Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն և հետախուզում” մասնագիտացմամբ:

Ուսուցման պրոցեսն ամբիոնում վարում են գիտաարտադրական և մանկավարժական փորձ ունեցող մասնագետները:

Ամբիոնի աշխատակիցների գիտական գործունեությունն ընդգրկում է լայն շրջանակներ: Նրանց ուշադրության կենտրոնում են գտնվում ՀՀ ռեզիոնալ երկրաբանության, մագմատիզմի, տեկտոնիկայի, մետաղագոյացման ՕՀՀ որոնման, հետախուզման և երկրաբանատնտեսագիտական գնահատման հիմնահարցերը:

Ամբիոնի ուշադրության կենտրոնում է գտնվում հատկապես հանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ՀՀ ընդերքօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտների օրենսդրական դաշտերի, մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի արդյունահանման ու վերամշակման թափոնների հետ կապված երկրաբանապահպանական խնդիրների քննարկումը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների մշակումը: Այդ կապակցությամբ աշխատանքներ են տարվում նաև պոչամբարների մոդելավորման, որպես երկրորդային հումքի՝ օգտակար բաղադրիչների որակի ու քանակի գնահատման, դրանց տնտեսագիտական գնահատման և արդյունաբերական նշանակության պարզաբանման ուղղությամբ:

Ամբիոնի աշխատակիցները ներգրավված են ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացմանն ուղղված ծրագրերում: Ամբիոնը համագործակցում է նաև ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Շրջակա միջավայրի այլ նախարարությունների, Հայաստանյան Օրիուս կենտրոնների, ԲՈՒՀ-երի հանքարդյունաբերության ու բնապահպանական հարցերով զբաղվող կենտրոնների և հասարակական կազմակերպությունների հետ: Բացի այդ ամբիոնի աշխատակիցները համագործակցում են առանձին միջազգային կազմակերպությունների, ընկերությունների և փորձագետների հետ:

Ամբիոնի դասախոսները մշտապես մասնակցում են նաև ընդերքի մասին ՀՀ օրենսդրության կատարելագործման և ենթաօրենսդրական ակտերի մշակման գործընթացներին, ինչպես նաև անդամակցում են Հանրապետության տարբեր գիտական և արտադրական խորհուրդների:

Ամբիոնի աշխատակիցները մասնակցել են Հայաստանում և արտերկրներում՝ Ֆրանսիա, Ռուսաստան, Բելառուս, Ուկրաինա, Իտալիա, Իրան, Շվեյցարիա և Կոլումբիա, կազմակերպված միջազգային գիտական խորհրդակցությունների, կոնֆերանսների ու ֆորումների, ինչպես նաև Եվրասիայի ֆոնդի, Copernicus-ի, INTAS-ի, MHTI-ի միջազգային գիտական գրանտներում:

Ուսումնական պրոցեսը

ՕՀՀ որոնման և հետախուզման ամբիոնն ունի հետևյալ կաբինետ-լսարանները, որտեղ կազմակերպվում են մասնագիտական ուսուցման դասընթացները՝

1. Ամբիոնի վարիչի աշխատասենյակ (318 սենյակ)
2. ՕՀՀ որոնման և հետախուզման ամբիոն (512 սենյակ)
3. ՕՀՀ որոնման և հետախուզման կաբինետ (218 սենյակ)
4. ՕՀՀ կառուցվածքների հետազոտման մեթոդների կաբինետ (122 սենյակ)
5. Օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման և մոդելավորման՝

Միեր Ջուլիաճյանի անվան ուսումնական լաբորատորիա (325 սենյակ)

6. Ջոհված ուսանող ազատամարտիկ Արթուր Փարսադանյանի անվան կառուցվածքային երկրաբանության և երկրաբանական քարտեզագրության կաբինետ (221 սենյակ)

Դասավանդվող առարկաներն ընդգրկում և լուսաբանում են օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ողջ պրոցեսը՝ հետազոտվող տարածքի երկրաբանական հանույթից ու քարտեզագրումից մինչև հանքավայրերի երկրաբանական - տնտեսագիտական գնահատումը:

Առանցքային առարկաներից են “Կառուցվածքային երկրաբանություն և երկրաբանական քարտեզագրություն”, “ՕՀՀ որոնում և հետախուզում” դասընթացները, որոնք եզրափակվում են դաշտային ուսումնա-արտադրական պրակտիկաներով: “Կառուցվածքային երկրաբանություն և երկրաբանական քարտեզագրություն” առարկայից ուսումնական պրակտիկան կազմակերպվում է ուսուցման երկրորդ տարվա վերջին, հուլիս ամսին: Ուսանողները պրակտիկան անց են կացնում Բջնիի և Մարմարիկի փորձադաշտերում:

Արտադրական պրակտիկաները կազմակերպվում են ֆակուլտետի կաբինետներում և լաբորատորիաներում, գիտահետազոտական կենտրոններում, ինստիտուտներում, մասնավոր լեռնաարդյունահանող ընկերություններում և երկրաբանահետախուզական արշավախմբերում:

Հատուկ դասընթացների ցանկում են նաև «Հանքավայրերի և հանքային մարմինների ուրվագծում», «ՕՀՀ մոդելավորում», «Տեխնաձին հանքահումքային ռեսուրսներ», «Հանքային հումքի տնտեսագիտություն»,

“Երկրաբանատեղեկատվական համակարգերի կիրառումը երկրաբանահանութային աշխատանքներում” և “Micromine GGIS և GeoBank համակարգերի կիրառումը հանքարդյունահանման աշխատանքներում” մոդուլները: Վերջինս իր մեջ ներառում է հանքավայրերի հետախուզման և շահագործման աշխատանքների կազմակերպման ու սպասարկման SS ոլորտում մեծ պահանջարկ վայելող Micromine (GGIS), Micromine FIELD MARSHAL, Micromine Geobank, Leapfrog Geo ծրագրային ապահովումների աշխատանքային հնարավորությունների հետ ծանոթացում: Այն հնարավոր է դարձել ամբիոնի և Ավստրալիական Micromine, Նոր Զելանդական Seequent ընկերությունների միջև կնքված պայմանագրերի և սերտ համագործակցության շնորհիվ:

Ապագա երկրաբան մասնագետների պատրաստման գործում ամբիոնն իր մասնագիտական ուսուցման պլաններում ընդգրկել է մագմայականության, տեկտոնիկայի, հնէաբանության, մետաղագոյացման, հանքավայրերի որոնման և հետախուզման, նրանց տնտեսագիտական գնահատման, ընդերքօգտագործման բնապահպանական և իրավական հարցերի, երկրաբանահետախուզական աշխատանքների ու հանքավայրերի շահագործման նախագծերի մշակման, փորձաքննության, մենեջմենտի և այլ դասընթացներ, որոնք հնարավորություն են տալիս շրջանավարտներին ազատ աշխատանք գտնելու ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում և բարձր գիտելիքներ ու կարողություններ դրսևորելու համապատասխան աշխատանքային միջավայրում:

Ամբիոնի կողմից պատրաստվող երկրաբանության որակավորմամբ շրջանավարտները կարող են աշխատել ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում, Շրջակա միջավայրի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Գյուղատնտեսության, քաղաքաշինության նախարարություններում, ինչպես նաև երկրաբանահետախուզական պետական և լեռնարդյունահանող մասնավոր բազմաթիվ ձեռնարկություններում: Նրանց պահանջարկը մեծ է նաև շահագործվող հանքավայրերում, քանի որ այս մասնագիտացմամբ երկրաբաններն աշխատում են ընդհուպ մինչև

հանքավայրերի պաշարների սպառումը և նրա փակումը: Շրջանավարտները հաջողությամբ կարող են աշխատել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրներում:

Գապը մեզ հետ

ՀՀ, Երևան 0025, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ, № 1 ուս. մ/շ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ

Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոն

Ամբիոնի վարիչ, դոցենտ, երկր.գ.թ. Շ.Վ.Խաչատրյան

318 կաբինետ, հեռ. (+374 60) 710-452, ներքին 34-52, էլ. հասցե՝ rubmov@ysu.am

Ամբիոնի աշխատակիցներ՝

512 սենյակ, հեռ. (+374 60) 710-451, ներքին 34-51